ՅԵՂԱՍՊԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ

TANER AKÇAM

YÜZYILLIK APARTHEID

1918-1923 Türkiyesi: Bağımsızlık
ve Apartheid Rejiminin İnşası

ԹԱՆԵՐ ԱՔՉԱՄ

ՅԵՂԱՍՊԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ

1918-1923 թթ. Թուրքիայի Հանրապետության
ձևավորումը և ապարտեիդի ռեժիմի կառուցումը

Թարգմանությունը թուրքերենից՝
Մելինե Անումյանի

ԵՐԵՎԱՆ
2025

ՀՏԴ 94(560)
ԳՄԴ 63.3(5Թու)
Ա 980

Աքչամ Թաներ
Ա 980 Ցեղասպան պետության ակունքները: 1918-1923 թթ. Թուրքիայի Հանրապետության ձևավորումը և ապարտեիդի ռեժիմի կառուցումը / Թ. Աքչամ.- Եր.: Newmag, 2025.- 208 էջ:

«Ցեղասպան պետության ակունքները» («Հարյուր տարվա ապարտեիդ») գրքում Թաներ Աքչամը քննադատում է Թուրքիայի Հանրապետության հարյուր տարվա պատմությունը և ընդգծում դրա կառուցվածքային խնդիրներն ու ժողովրդավարական արժեքների բացակայությունը: Նա հարց է առաջադրում, թե ինչու հնարավոր չեղավ ստեղծել հավասարության վրա հիմնված հանրապետություն, ցույց է տալիս, որ երկրի հիմնադրման պաշտոնական պատմությունը խեղաթյուրված է և ծառայում է գոյություն ունեցող ռեժիմին: Հեղինակը նշում է, որ Թուրքիայի պետական կառուցվածքը հիմնված է խտրականության, բռնության և ճնշումների վրա, ինչը հիշեցնում է «ապարտեիդի» համակարգի գործելաոճը: Գիրքը հիմնված է պատմական փաստերի վերլուծության վրա, ուսումնասիրված են Հայոց ցեղասպանությունը, քրդերի և ազգային ու կրոնական այլ փոքրամասնությունների ճնշումները: Աքչամն առաջարկում է պատմությունը վերաշարադրել նոր տեսանկյունից՝ ձերբազատվելով պետական քարոզչությունից: Գիտնականը կոչ է անում ընդունել անցյալի սխալները, որպեսզի Թուրքիան կարողանա կառուցել ավելի ազատ և արդար հասարակություն:

ՀՏԴ 94(560)
ԳՄԴ 63.3(5Թու)

ISBN 978-9939-967-81-3
© 2023, Taner Akçam
Թաներ Աքչամ «Ցեղասպան պետության ակունքները» © 2025, «Նյու Մեգ» ՍՊԸ

Այս գրքի հեղինակային բոլոր իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Իրավունքները ձեռք են բերվել հեղինակի հետ կնքած պայմանագրով:

Բովանդակություն

Առաջաբան 9

Գլուխ առաջին Ընդհանուր շրջանակ 15

Չորս գլխավոր թեզերը 15

Ապարտեիդի ռեժիմը և եռաստիճան կաստայական համակարգը 23

Հիերարխիայի ամենաստորին կարգի ներկայացուցիչները՝
քրիստոնյաները և հրեաները 25

Հիերարխիայի միջանկյալ աստիճանը. ուծացման այլընտրանքը 33

1925 թ. Արևելյան բարեփոխումների նախագիծը
և նմանատիպ ծրագրերը 36

Ուծացումը չի բավարարում աստիճանները հաղթահարելու համար.
թրքությունը՝ որպես ցեղի, արյան և ծագման միություն 40

Ոչ թուրք մուսուլմանների պիտակավորումը 45

Գիտական աշխատություններում ապարտեիդի ռեժիմի անտեսումը.. 51

**Գլուխ երկրորդ 1918-23 թթ. երկու առանձին
պատմությունները** 55

Առաջին պատմությունը. 1918-1923 թթ.՝ որպես Անկախության
պատերազմ 55

Երկրորդ պատմությունը. 1918-1923 թթ.՝ որպես ապարտեիդի
ռեժիմի հիմնում 61

Ապարտեիդի հիմքերը գցվում են Անկարայում 67

Առաջին քայլը՝ ապարտեիդի ուղղությամբ. Ազգային հարկերը 72

Երկրորդ քայլը. Լոզանի պայմանագիրը և քաղաքացիության
իրավունքները 76

Երրորդ քայլը. տեղաշարժման կանոնագրերը և
թուրքական ցեղից սերելը 78
Ապարտեիդը միավորվում է. ռասիստական օրենքները և
ճամփորդելու արգելքները 83
Հայերը չեն կարող ապրել գյուղերում և
դաշտային տարածքներում 91
Քաղաքացիների պիտակավորումն ըստ ցեղային
պատկանելության 96
Ոչ միայն պիտակավորում են, այլև արձանագրում
նրանց ունեցվածքը 102
Բռնությամբ աքսորումը 108

Գլուխ երրորդ Շեյխ Սայիդի ապստամբությունը 111
Մալաք Բարշոմը, ասորիները, հայերը և Շեյխ Սայիդը 112
Քար լռություն՝ Շեյխ Սայիդի ապստամբությանը
քրիստոնյաների մասնակցության թեմայի շուրջ 120
Ջգալի խեղաթյուրում. Շեյխ Սայիդի ապստամբությունը և
ալևիների մասնակցությունը 128
Հասան Հայրիի դատական գործը և դրա դասերը 131
Չերքեզները և մի անդրադարձ Շեյխ Սայիդի ապստամբությանը 139
Քանի դեռ ուժի մեջ է գործող պատմագրությունը 147

Վերջաբան 153
Աղբյուրներ 163
Հղումներ 172

Հրանտ Դինքին...

Սիրելի Հրանտ, քեզ ապանողները
չկարողացան պատկերացնել, որ քո մահը
բեկումնային կլինի:
Դու հայոնություն ես՝
որպես մեր եղբայրասած Թուրքիայի հիմնադիր,
այն Թուրքիայի, որի բոլոր քաղաքացիներն
ազատ ու հավասար կլինեն:

Առաջաբան

2023 թվականը Թուրքիայի Հանրապետության հիմնադրման հարյուրերորդ տարին է: Այս տարածքներում ապրող յուրաքանչյուր անհատ երազում է քաղաքացիների հավասարության սկզբունքը կյանքի կոչած, ժողովրդավարական և մարդու իրավունքների հանդեպ հարգալից հանրապետություն, բայց, ցավոք, այդ երազանքը ոչ մի կերպ իրականություն չի դառնում:

Այս աշխատությունը մասամբ քողազերծում է պատասխանը այն հարցի, թե ինչու հնարավոր չի եղել կերտել ժողովրդավարական հանրապետություն, որը բոլորն են փափագում:

Ամեն պետություն հաստատապես ունի իր ստեղծման պատմությունը: Մեր երազանքների հանրապետության համար ևս պետք է հիմնադրման նոր պատմություն: Ինչպիսի՞ն պետք է լինի այդ նոր հանրապետությունը, ո՞ր հիմքի և ի՞նչ հիմնասյուների վրա պետք է հենվի: Ձեր առջև դրված գիրքը գրվել է որոշ առումով այդ հարցերի պատասխանների շուրջ մտորելու նպատակով:

Մեր աշխատության տեսանկյունը միանգամայն պարզ է. նոր ապագան հնարավոր է մեր անցյալի, ներկայի և մեր մասին նոր պատմության շարադրմամբ: Ձենք կարողանա իրականացնել այսօրվա հանրապետությունից ավելի ազատ

և արդար հանրապետության մեր երազանքը, եթե չկարողանանք մեր այսօրվա և վաղվա վերաբերյալ նոր պատում գրել ու անդադար կրկնենք անգիր արած մեր պատմությունը:

Որպես անհատ՝ որոշակի արժեքներ և կանոններ ունեցող պատմական իրականության մեջ ենք ծնվում և որպես այդ իրականության մասնիկ՝ մեր ներկայացրած պատմությունն ենք ունենում: Կարծում ենք, թե այդ պատմությունը բնական է, հաստատուն ու անփոփոխ, և անընդհատ կրկնում ենք այն: Այնինչ, մեր աշխարհն ի հայտ է եկել որպես մի շարք պատահականությունների հետևանքով տեղի ունեցած դիպվածների արդյունք: Պատմությունը ձևավորվել է ոչ միայն տեխնոլոգիաների, քաղաքականության և հասարակության միջոցով, այլև մեր մտքերի, վախերի ու երազանքների: Շատ հաճախ մենք մոռանում ենք այդ պարզ ճշմարտությունը:

Նույնը կարելի է ասել նաև Թուրքիայի Հանրապետության հիմնադրման մասին: Ենթադրում ենք, թե Թուրքիայի Հանրապետության հիմնադրման՝ մինչև օրս ներկայացված պատմությունը հաստատուն և անփոփոխ իրականություն է: Մինչդեռ այդ պատմության մեջ, պատմություն, որը գրեթե անգիր ենք արել, «անցյալի սառցե ձեռքը դուրս է գալիս մեր նախնիների գերեզմանից, բռնում մեր ծոծրակից ու մեր գլուխը պտտում դեպի միակ հնարավոր ապագան»*: Այդ պատմությունը համարում ենք մեր գոյության բնական և անխուսափելի մասնիկը այդ սառը ձեռքի պատճառով, որ զգում

* Այս խոսքը մեջբերված է Յուվալ Հարարիի «Homo Deus. Ապագայի համառոտ պատմություն» վերնագրով աշխատությունից: Տե՛ս Յուվալ Նոյ Հարարի, «Homo Deus. Ապագայի համառոտ պատմություն», newmag հրատարակչություն, Երևան, 2020, էջ 79 (Բոլոր ծանոթագրությունները՝ **new**mag-ի):

ենք մեր ծննդյան պահից սկսած: Ահա թե ինչու երբեմն ուշքի գալով և այդ ձեռքից մեզ ազատելով՝ մեկ ուրիշ ապագա ենք պատկերացնում:

Հանրապետության պատմության մասին մի նոր պատում գրելու առաջարկի նպատակը մեր կոկորդը պինդ սեղմող անցյալի այդ սառը ձեռքը թուլացնելն է: Գիտակցում ենք, որ մեր պատմության մասին խոսելու դեպքում «կնկատենք այն հնարավորությունները, որոնք մեր պապերը չեն կարողացել պատկերացնել կամ չեն ցանկացել, որ մենք պատկերացնենք՝ մեր հայացքները շրջելով»: Մեր պատմության մասին խոսելու դեպքում, «մեզ այսօր այստեղ հասցրած պատահական իրադարձությունների շղթան ուսումնասիրելով՝ կհասկանանք, թե ինչպես են անցյալում ձևավորվել գաղափարներն ու երազանքները, և կսկսենք միանգամայն այլ կերպ մտածել ու երազել: Պատմության ուսումնասիրությունը մեզ չի հուշի, թե ինչ ընտրություն է պետք կատարել, սակայն այն մեզ առնվազն ընտրության հնարավորություն կտրամադրի»*:

Ես նկատի չունեմ կաղապարված այն առաջարկը, թե «պատմությունից պետք է դասեր քաղել»: Հակառակը՝ պատմության հարուցած արգելքներից ազատվելու համար որոշ առումով մտավոր կարողություններ են պետք: Ապագայի վերաբերյալ այլընտրանքներ կարող ենք ունենալ միայն այն դեպքում, երբ փոխենք պատմության մասին մեր խոսույթը: Այս աշխատության նպատակը դրա ուղիներից մեկը մատնանշելն է: Ճշմարտությունը հետևյալն է. աշխարհը փոխել ձգտող հոսանքներն ընդհանրապես պատմության վերա-

* Նույն տեղում:

շարադրմամբ են ի հայտ գալիս և այդպիսով ճանապարհ հարթում մարդկանց՝ ապագայի մասին նոր պատկերացումներ ունենալու համար:

Ձեր առջև դրված գիրքն ուշագրավ պատմություն ունի: Ամեն բան սկսվեց սիրելի ընկերուհուս՝ Հաննա Քերքինիի հեռախոսազանգով: 2019 թ. դեկտեմբերից ի վեր մամուլում, գլխավորապես՝ «Գազեթե Դուվար» պարբերականում, գրում էի, որ մոտենում է Թուրքիայի Հանրապետության հարյուրերորդ տարեդարձը, և այդ առթիվ հարկ է ստեղծել նոր հիշողություն և դրա հիմնադրման մասին նոր պատմություն: 2020 թ. սկզբին տեղեկացա The New York Times-ի «1619-ի նախագիծ» խորագրով մի նախաձեռնության մասին: Աֆրիկայից Ամերիկա բերված առաջին ստրուկների տեղափոխման խորհրդանշական տարեթվի՝ 1619 թվականի 400-րդ տարելիցի կապակցությամբ սկսված այդ նախագծի գաղափարը պարզ էր: Եթե ԱՄՆ-ում այսօր ցանկանում են հաղթահարել ռասիզմը, ապա պետք է ըմբռնեն, որ այն կառուցվածքային հիմնախնդիր է: Եվ այն սկսվել է 1776 թ. ԱՄՆ-ի հիմնադրմամբ և ներհատուկ է այդ համակարգին: ԱՄՆ-ի հիմնադրման պատմությունը միայն որպես Բրիտանական թագավորության դեմ մղված, հանուն ազատության պատերազմ ներկայացնելը կոծկում էր այդ կառուցվածքային ռասիզմը:

The New York Times-ի «1619 նախագիծն» ինձ համար ներշնչանքի աղբյուր եղավ, որպեսզի ավելի խիզախորեն արտահայտեմ Թուրքիայի Հանրապետության մասին իմ գաղափարները: Արդ, այդ թեմայով իմ հոդվածից թե հարցազրույցից հետո զանգեց Հաննա Քերքինին: Նա շատ կարևոր և անհրաժեշտ էր համարում Թուրքիայի Հանրապետութ-

յան հիմնադրման նոր պատմության գաղափարը: Ջրույցի ընթացքում ասաց, որ իր պապի եղբորը կախել են Շեյխ Սայիդի ապստամբությանը* մասնակցելու մեղադրանքով: Բացականչեցի. «Կատա՛կ ես անում»: Նա ոչ միայն պնդեց իր ասածը, այլև հավելեց, որ մահապատժի է ենթարկվել առնվազն 8 ասորի: «Դու գիտակցո՞ւմ ես քո ասածի կարևորությունը»,– գոչեցի ես: Դրանից հետո Հաննան ինձ ուղարկեց իր պապի այդ եղբոր՝ Մալաք Բարշոմի մասին գիրքը: Այն օգնեց, որ ավելի ընդլայնեմ Թուրքիայի հիմնադրման մասին պատմությունը, որ ներկայացրել էի միայն Հայոց ցեղասպանության համատեքստում: Սկսեցի խորապես ուսումնասիրել Մալաք Բարշոմի պատմությունը և Շեյխ Սայիդի ապստամբությունը: Նաև շարունակում էի Թուրքիայի Հանրապետության ազատագրման ու ստեղծման մասին հոդվածներ գրել և հարցազրույցներ ունենալ:

Դոկտոր Քումրու Թոքթամըշն ինձ հարցրեց, թե իմ հոդվածներում արտահայտած գաղափարները կներկայացնե՞մ գիտաժողովին, որն անցկացվելու էր 2023 թ. փետրվարին: Իմ զեկուցման գիտական հոդվածն սկսեցի պատրաստել 2022 թ. նոյեմբերից: Ի վերջո ձեռքիս տակ այնքան նյութ

---

* 1925 թ. փետրվարին Թուրքիայի արևելյան նահանգներում բռնկվել է քրդական ապստամբություն՝ Շեյխ Սայիդ Ռզայի գլխավորությամբ: Թուրքիայի 14 նահանգներում տարածված ապստամբության մասնակիցների թիվը շուրջ 40 հազար էր: Ապստամբության դրդապատճառը Մուստաֆա Քեմալի նախաձեռնությամբ խալիֆաթի վերացումն էր, ինչի հետևանքով Նաքշբենդի թարիքաթի (սուֆիական միաբանություն) ազգությամբ քուրդ Շեյխ Սայիդ Ռզան իր համակիրների հետ խռովություն բարձրացրեց՝ պահանջելով խալիֆաթի վերականգնում և քրդական ինքնավարություն: 1925 թ. ապրիլի վերջերին թուրքական պետությանը հաջողվեց ճնշել ապստամբությունը: Շարժման 53 առաջնորդները, այդ թվում՝ Շեյխ Սայիդը, մահապատժի ենթարկվեցին:

հավաքվեց, որ ճիշտ կլիներ դրանք գրքի տեսքով ներկայացնել: Արդ, ձեր առջև դրված գիրքը հենց այդ գիտաժողովի համար կատարված աշխատանքների ընդարձակված տարբերակն է:

Հոդվածը գրքի վերածելու ընթացքում շատերն են ինձ օգնել: Շատ արժեքավոր էր Հաննա Քերքինիի աջակցությունը: Ֆըրաթ Այդընքայան հանդես է եկել կառուցողական առաջարկներով և հուշումներով: Ջեմսի Քայան մանրամասն տեղեկություններ է հաղորդել ոչ միայն քոչուշաղը* աշիրեթի մասին, որի անդամն է, այլև Դերսիմի բոլոր աշիրեթների վերաբերյալ: Ցան Բեթ-Շավոցեն, Մուրադ Ըսըն, Նևզաթ Օնարանը, Օմեր Թյուրքօղլուն և Սայիդ Չեթինօղլուն սիրով ինձ տրամադրեցին իրենց ձեռքի տակ եղած նյութերը: Նրանց բոլորին առանձնահատուկ շնորհակալ եմ: Երախտապարտ եմ նաև գրքի խմբագիր Ռոբեր Քոփթաշին: Նա շատ աշխատանք է կատարել. ոչ միայն մեծ համբերությամբ ընդունել է իմ անվերջ, երբեմն իրար հակասող փոփոխությունները, այլև բովանդակության վերաբերյալ որոշ առաջարկներ անելով՝ հարստացրել է տեքստը: Անշուշտ, գրքում հանդիպող բոլոր թերությունները, սխալները և բացթողումներն իմն են:

Լոս Անջելես, հունիսի 25, 2023 թ.

---

* Քրդական ցեղի անվանումը:

Գլուխ առաջին

Ընդհանուր շրջանակ

Չորս գլխավոր թեզերը

Աշխատության մեջ առաջ են քաշվելու չորս գլխավոր թեզեր: Առաջին թեզը վերաբերում է այն հարցին, որ Թուրքիայում գործում է ապարտեիդի[1] ռեժիմ, և որ այդ վարչակարգի հիմքերը գցվել են Ազատագրական պատերազմի[2] տարիներին: Ապարտեիդը միջազգային տեքստերում սահմանվել է որպես հանցագործություն, որը ենթադրում է «որևէ ռասայական խմբի կամ խմբերի՝ երկրի քաղաքական, սոցիալական, տնտեսական և մշակութային կյանքին մասնակցությունն արգելելուն ուղղված ամեն տեսակի օրինական ու այլ միջոցների ձեռնարկում և հատկապես ռասայական մի խմբի կամ խմբերի անդամներին մարդու հիմնական իրավունքներից և ազատություններից զրկելով՝ նմանատիպ խմբի կամ խմբերի լիարժեք զարգացումը խոչընդոտող պայմանների դիտումնավոր ստեղծում»[3]:

Ապարտեիդը Թուրքիայի 100-ամյա պատմության ամփոփումն է: Ապարտեիդի ռեժիմը սահմանվել է որպես հանրապետության հիմնադիրների, գլխավորապես՝ Մուստաֆա Քեմալի նախընտրություն: Ո՛չ այդ ռեժիմի գոյությունն է

ամբողջական գիրքն այստեղ է՝
Bookmark